ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի բազայի վրա 1943 թ. հիմնադրվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան։ Այդ նույն տարում կազմակերպվեց նրա Հրատարակչությունը։ Հիմնադրման վաղ շրջանում փոքր էր Հրատարակչության արտադրողական կարողությունը։ Նա ուներ մի փոքրիկ տպարան, որը սակավաթիվ բանվորներով և օժանդակ ապարատով չէր կարող բավարարել ռեսպուբլիկայի աճող գիտության պահանջմունքները։

Գիտության նկատմամբ Սովետական կառավարության ցույց տված հոգատարության շնորհիվ հսկայական միջոցներ հատկացվեցին Գիտությունների ակադեմիայի Հրատարակչության նյութական-արտադրական բազան ընդլայնելու և բարելավելու համար։ Կատարված ներդրումների շնորհիվ աճեց Հրատարակչության աշխատանքի ծավալը. այսպես, եթե 1944 թ. հրատարակչական պլանը կազմել է ընդամենը 159 մամուլ, ապա 1961 թ. այն կազմում է ավելի քան 2100 մամուլ։ Միայն վերջին երեք տարում հրատարակվել են 410 անուն գիտական աշխատություններ՝ 4800 մամուլ ընդհանուր ծավալով։ Հրատարակչության աշխատանքների ծավալման զուգընթաց աճեցին ու որակավորվեցին նրա կադրերը։ Այդ կադրերի նվիրված աշխատանքի շնորհիվ զգալիորեն բարձրացել է լույս ընծայվող գրականության պոլիգրաֆիական որակը։

Ակադեմիայի հրատարակչական աշխատանքը ղեկավարում է խմբագրական-հրատարակչական խորհուրդը, որին կից աշխատում են պարբերական հրատարակությունների 9 խմբագրություններ։ Այդ խմբագրությունների գծով մինչև հիմա հրատարակվել են Ակադեմիայի Նախագահության զեկույցների, ֆիզիկա-մաթեմատիկական, տեխնիկական, քիմիական, երկրաբանական, բիոլոգիական, բժշկական, հասարակական գիտությունների «Տեղեկագրերի» սերիաների և «Պատմա-բանասիրական հանդեսի» բազմաթիվ հատորներ ու պրակներ։ Գիտական այդ պարբերականներում տպագրվում են գիտության համապատասխան ճյուղերին վերաբերող հոդվածներ ու հաղորդումներ։

Անցյալում մենագրական հետազոտությունները կազմում էին հրատարակչական պլանի աննշան մասը։ Վերջին տարիներին նրանց քանակն ավելացավ և ներկայումս մենագրական ուսումնասիրությունները կազմում են պլաններում նախատեսված աշխատությունների կեսից ավելին։ Հրատարակվել են գիտության տարբեր բնագավառների գծով բազմաթիվ մենագրություններ, գիտական աշխատությունների ժողովածուներ, գիտա-հանրամատչելի բրոշյուրներ և այլն։

Գիտության զարգացման տեսակետից կարևորագույն նշանակություն ունեն ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի երկու մեծածավալ հատորներով լույս տեսած «Գիտական աշխատությունները», Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Հ. Գ. Մաղամյանի՝ «Հազվագյուտ մետաղներ», «Մետաղային հանքավայրեր», Ա. Ն. Շահինյանի՝ «Մոտավորությունների տեսություն կոմպլեքս տիրույթում», Կ. Ն. Պաֆենոլցի՝ «Կովկասի գեոլոգիական ուրվագիծը», Ս. Ս. Մկրտչյանի «Հայկական ՍՍՌ Զանգեզուրի հանքաբեր մարզը» աշխատությունները։

Կարևոր գործեր են հրատարակվել պատմության, տնտեսագիտության, լեզվաբանության, գրականության, արվեստի, փիլիսոփայության գծով։

Ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի գիտա-հետազոտական հիմնարկներն իրենց գործունեության ընթացքում զգալի տեղ են հատկացրել ժողովուրդների բարեկամությանը նվիրված դրքերի հրատարակմանը։ Այդ աշխատությունները հարուստ փաստերի հիման վրա լուսաբանում են ռուս մեծ ժողովրդի, Անդրկովկասի բազմազգ և մյուս եղբայրական ժողովուրդների անշահախնդիր օգնությամբ հայ ժողովրդի ձեռք բերած հսկայական նվաճումները։

ժողովուրդների բարեկամությանն են նվիրված Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Մ. Գ. Ներսիսյանի՝ «Ռուս-հայ հարաբերությունների պատմությունից», «Դեկաբրիստները Հայաստանում», Ա. Ռ. Հովհաննիսյանի՝ «Անդրկովկասի միացումը Ռուսաստանին և միջազգային հարաբերությունները XIX դարի սկզբին» մենագրությունները, ինչպես նաև Գ. Ն. Հովնանի՝ «Մաքսիմ Գորկին և հայ կուլտուրան», «Ռուս-հայ գրական կապերը XIX և XX դարերում», Ամպեր Երեսանյու՝ «Հայ և ադրբեջանական ժողովուրդների բարեկամության արտացոլումը գրականության մեջ», Մ. Ի. Ֆետիսովի՝ «Սովետական բազմազգ գրականության ստեղծագործական կապերի ուսումնասիրման պրոբլեմները», Ա. Բաբայանի՝ «Շիլլերը հայ գրականության մեջ և թատրոնում», Ամինե Ավդալի՝ «Անդրկովկասի քրդերի կենցաղը» և ուրիշների աշխատությունները։

1960 թ. լույս տեսավ «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» փաստաթղթերի ու նյութերի 40 մամուլանոց ժողովածուն։ Ժողովածուն արտացոլում է Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ Հայաստանի աշխատավորների մղած պայքարը սովետական կարգերի հաստատման ու ամրապնդման համար 1917 թ. փետրվարից մինչև 1922 թ. փետրվարն ընկած ժամանակամիջոցում։ Փաստաթղթերի ու նյութերի մեծ մասը լույս են ընծայվել առաջին անգամ։ Ինչպես այս ժողովածուն, այնպես էլ «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը», «Ուրվագիծ սովետահայ թատրոնի պատմության», ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի «Գիտությունը Հայաստանում 40 տարում» աշխատությունները հրատարակվել են Հայաստանի Կոմունիստական պարտիայի կազմավորման և Հայաստանում սովետական կարգերի հաստատման 40-ամյակի առթիվ։

Այս ուսումնասիրությունների մեջ համառոտակի շարադրված են Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի, գիտության, արվեստի, գրականության, պատմության զարգացման, ինչպես նաև բնակչության բարեկեցության ու կուլտուրական մակարդակի բարձրացման ուղղությամբ ունեցած նվաճումները, որ Հայաստանի աշխատավորությունը ձեռք է բերել անցած 40 փառապանծ տարիների ընթացքում։

Սովետական Հայաստանի պատմության ուսումնասիրությանն են նվիրված Ակադեմիայի Պատմության ինստիտուտի կողմից հրատարակված «Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության» երեք գրքերը։ Արվեստի ինստիտուտը նախաձեռնել է «Սովետահայ կինոարվեստ» գիտական աշխատությունների հավաքածուի հրատարակությունը։ Արդեն լույս են տեսել այդ հավաքածուի առաջին երկու գրքերը։ Սովետական ականավոր արվեստագետներից մեկի՝ Մարտիրոս Սարյանի կյանքին ու ստեղծագործությանն է նվիրված Ռ. Գ. Դրամբյանի «Մարտիրոս Սարյան» աշխատությունը։ Մենագրության մեջ շարադրված է մեծ նկարչի անցած ուղին, նրա ստեղծագործական յուրահատկությունը։ Հրատարակվել է Ա. Մնացականյանի «Հայկական զարդարվեստի մոտիվների ծագումն ու գաղափարական բովանդակությունը» կարևոր մենագրությունը։

Մանուկ Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտն ավարտեց հայ պրոլետարական գրականության հիմնադիր Հակոբ Հակոբյանի երկերի ակադեմիական հրատարակությունը 4 հատորով։ Ընթերցասեր հասարակությանն են հանձնված նաև հայ գրականության կլասիկներ Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Գ. Սունդուկյանի, Հ. Թումանյանի երկերի ակադեմիական հրատարակությունները։

Շնորհակալ աշխատանք կատարեց Լեզվի ինստիտուտը, ավարտելով ռուս-հայերեն բառահատոր մեծ բառարանի հրատարակությունը։ Այդ բառարանը գիտական ու գործնական կարևոր նշանակություն ունի և մի անհրաժեշտ ձեռնարկ է գիտական աշխատողների, թարգմանիչների, ուսուցիչների, ուսանողների և բոլոր նրանց համար, ովքեր դիմում են ռուսաց լեզվով բազմահարուստ աղբյուրներին։ Ինստիտուտը պատրաստել է և շուտով հրատարակության կհանձնի նաև «Արդի հայերենի բացատրական բառարան» 4 հատորով։ Այդ բառարանը (ավելի քան 400 մամուլ) իր մեջ ամփոփելու է ժամանակակից հայերեն գրական լեզվի բոլոր բառերը՝ սկսած Աբովյանից մինչև մեր օրերը։

Վերջին տարիների ընթացքում Ակադեմիայի Հրատարակչությունը լույս է ընծայել Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Բ. Կարինյանի «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» և Ա. Գ. Հովհաննիսյանի «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» ուսումնասիրությունների երկուական հատորները, ինչպես նաև մեծավաստակ դիտնական, հանգուցյալ Հ. Անդրյանի «Հայոց լեզվի լիակատար քերականություն 562 լեզուների համեմատությամբ» բազմահատոր աշխատության առաջին չորս հատորները։

Հրատարակչությունը մեծ ուշադրություն է դարձնում հայ ժողովրդի պատմության վերաբերյալ գիտական գրականության հրատարակ-

մանը։ «Նյութեր հայ ժողովրդի պատմության» մատենաշարով լույս են ընծայվել այնպիսի կարևոր աշխատություններ, ինչպիսիք են՝ Լ. Խաչիկյանի կազմած հայերեն ձեռագրերի հիշատակարանների երկու մեծածավալ գրքերը, Վ. Հակոբյանի պատրաստած «Մանր ժամանակագրությունները» և այլ աշխատություններ։ Այս գրքերն իրենց մեջ պարունակում են մինչև այժմ անհայտ, մեծարժեք նյութեր միջնադարյան Հայաստանի պատմության ուսումնասիրության համար։

Քիչ աշխատանք չի կատարված հայ սկզբնաղբյուրները ռուսերեն լեզվով թարգմանելու բնագավառում։ Արդեն լույս են տեսել Փավստոս Բուզանդի «Պատմության», Մխիթար Հերացու «Ջերմաց Մխիթարության», Մխիթար Գոշի «Դատաստանագրքի», Հովհան Որոտնեցու և Դավիթ Անհաղթի փիլիսոփայական երկերի ռուսերեն թարգմանությունները։

1960 թ. հրատարակվեց Հ. Անասյանի «Հայկական մատենագիտություն» մեծածավալ աշխատության առաջին հատորը։

Միջնադարում հայ ժողովուրդը ստեղծել է ինքնատիպ և բարձրարժեք պոեզիա, որի մասին ռուս հայտնի բանաստեղծ և գիտնական Վալերի Բրյուսովը գրել է. «Միջնադարյան հայ քնարերգությունը հայկական ոգու իսկական հաղթանակն է համաշխարհային պատմության մեջ»։ Այդ թանկարժեք ժառանգությունը ըստ արժանվույն գնահատվեց միայն սովետական ժամանակաշրջանում։ Միայն վերջին մի քանի տարում հրատարակվեցին Սայաթ Նովայի, Նաղաշ Հովնաթանի, Պաղդասար Դպրի, Խաչատուր Կեչառեցու, Հովհաննես Սրգնկացու, Մատթեոս Ղրիմեցու ստեղծագործությունների քննական բնագրերը՝ ընդարձակ ուսումնասիրություններով։ Վերջին հինգ գրքերը լույս են ընծայվել Ակադեմիայի Հրատարակչության կողմից՝ «Միջնադարյան տաղերգուներ» գիտական մատենաշարով։ 1960 թ. հրատարակվեց նաև Հովհաննես Թլկուրանցու տաղերի գիտական-քննական բնագրերի հավաքածուն նույն մատենաշարով։ Ինչպես մյուս տաղերգուների, այնպես էլ Թլկուրանցու ստեղծագործությունների բնագրերը պատրաստված են Մատենադարանի բազմաթիվ ձեռագիր ընդօրինակությունների հիման վրա։

Գրականության ինստիտուտը ձեռնարկել է «Հայ ժողովրդական հեքիաթներ»-ի բազմահատոր հրատարակությունը՝ հանգուցյալ ակադեմիկոս Հովսեփ Օրբելու ընդհանուր խմբագրությամբ։ Մեծ ուշադրությամբ արդեն լույս են տեսել և գրաշուկայում սպառվել դրա առաջին երկու հատորները, շուտով հրատարակության կհանձնվի հեքիաթների III հատորը։ Այս ժողովածուի հրատարակությունն անցյալի մեր կուլտուրայի լավագույն ժառանգության արժեքավորման ու գնահատման արտահայտություններից մեկն է։

Հնագիտության գծով հրատարակվել են պրոֆեսորներ Կ. Գ. Ղաֆադարյանի, Բ. Բ. Պիոտրովսկու, Բ. Ն. Առաքելյանի հետաքրքիր մի շարք ուսումնասիրություններ։

1961 թ. նախատեսված է հրատարակել գիտության զանազան ճյուղերի պրոբլեմային հարցերին վերաբերող մի շարք կարևոր աշխատություններ ֆիզիկա-մաթեմատիկական, տեխնիկական, կենսաբանական, բժշկական, հասարակական գիտությունների գիտա-հետազոտական հիմնարկների կողմից։ Այդ աշխատությունների հրատարակումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն գիտության զարգացման, այլև ռեսպուբլիկայի արդյունաբերության ու գյուղատնտեսության համար։ Ակադեմիայի հրատարակությունների մեջ մեծ տեղ են գրավում Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերին վերաբերող գիտական հետազոտությունները։ Ընթացիկ տարում լույս են տեսնելու «Հայաստանի երկրաբանություն» աշխատության երկու հատորը, մի քանի մենագրություններ հանքային հարստությունների մասին։ Հրատարակվելու են գիտա-հանրամատչելի գրքեր և բրոշյուրներ ինչպես տեխնիկական, այնպես էլ հասարակական գիտությունների հիմնարկների կողմից։

Ա. Ի. Ալիխանյանի և Ս. Ս. Խեյֆեցի «Ժամանակակից էլեկտրոնային արագացուցիչները» գրքում գիտա-հանրամատչելի ձևով պատմվում է ֆիզիկայի ամենահետաքրքիր բնագավառներից մեկի՝ մեծ էներգիայի մասնիկների ստացման մասին։ Դ. Ա. Մարիկյանի «Կոսմիկական ճառագայթները և ներմիջուկային մասնիկները» ուսումնասիրության մեջ շարադրվում են ինչպես սովետական, այնպես էլ արտասահմանյան գիտնականների հաջողությունները կոսմիկական ճառագայթների հետազոտության գործում։ Հայաստանի հողերի ագրոքիմիական բնութագրմանն է նվիրված Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Գ. Ս. Դավրյանի 20 մամուլանոց մենագրությունը։ Ուսումնասիրության մեջ ամփոփված են հեղինակի վեցամյա կոմպլեքս հետազոտությունների արդյունքները։ Շուտով հրատարակության կհանձնվի Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Վ. Հ. Գուլքանյանի «Թամբուկենու խիրուրգիան» գիտա-հետազոտական աշխատանքը։

Հրատարակության են հանձնվում «Հողագործության քիմիացումը յոթնամյակում», «Հայաստանի հողերի ֆիզիկա-քիմիական հատկությունները», «Արարատյան դաշտավայրի պայ-

մաններում ցրտի և ցրտահարության բացասական ազդեցությունը բազմամյա կուլտուրաների վրա» և ուրիշ գիտա-հանրամատչելի բրոշյուրներ։

Պատրաստվում են հրատարակության մի շարք կարևոր աշխատություններ անտեսագիտության, փիլիսոփայության, արվեստի, պատմության, լեզվի, գրականության այն հարցերի վերաբերյալ, որոնք սերտորեն կապված են սոցիալիստական ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի զարգացման խնդիրների հետ։ Այդ աշխատություններից են՝ «Սովետահայ գրականության պատմություն» առաջին հատորը, «Սոցիալիզմի հաղթանակը Չեխոսլովակիայում», «Հայաստանի մեքենաշինության մասնագիտացումն ու կոոպերացումը», «Հայաստանի էլեկտրիֆիկացումը», «Գիտության զարգացման օրինաչափությունները սոցիալիզմի ժամանակ», «Գյուղի և քաղաքի միջև եղած էական տարբերությունների վերացման ուղին», «Սովետահայ թատրոնի տարեգրությունը», «Լենինը և հայ ժողովրդի պատմական բախտը», «Իմպերիալիզմի գազուրային քաղաքականության նոր ձևերը Մերձավոր և Միջին Արևելքում» և շատ ուրիշ գիտական ու գիտա-հանրամատչելի աշխատանքներ։

Գիտական աշխատությունների տպագրության և նրանց ժամանակին լույս ընծայման գործում մեծ դեր է կատարում Ակադեմիայի Հրատարակչության տպարանը։

Տարիների ընթացքում տպարանը մասնագիտացել և գործել է ակադեմիական հրատարակությունների (մասնավորապես ֆիզիկա-մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների գծով) տպագրման միակ բազան։ Այդ տպարանում յուրաքանչյուր տարի շարվում ու տպագրվում են 1700—1800 մամուլ մենագրություններ, պարբերականներ, գիտական աշխատությունների ժողովածուներ և այլն։

Տպարանի առաջավոր բանվորներից մի խումբ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Նախագահության կողմից վերջին տարում ձեռք առած մի շարք գործնական միջոցառումների շնորհիվ զգալի չափով բարելավվեց տպարանի աշխատանքը։ Այդ միջոցառումները որոշակի դեր խաղացին արտադրողականության և կազմակերպական աշխատանքի մակարդակը բարձրացնելու ուղղությամբ։ Գնալով մեծանում է տպարանի արտադրական կարողությունը և հարստացվում է տառային սընտեսությունը։ Ընթացիկ տարում տպարանը կբստանա ևս մի շարք նոր մեքենաներ՝ գրաշարական, տպագրական, կազմարարական և մյուս ցեխերի համար։ Բարձրացել է տպագրության, հատկապես գունավոր տպագրության, որակը, այս գործում ուշադրության արժանի աշխատանք են կատարում տպարանի արտադրող բանվորներն ու վարպետները։

Մեզ հաջողվել է պատրաստել մեծ թվով մասնագիտացած որակյալ բանվորներ, որոնք իրենց արտադրական ցուցանիշներով և բանիմացությամբ ետ չեն մնում վարպետներից։ Այդ կադրերից են՝ Էռնեստ Մարիկյանը, Ալեքսեյ Շատիլովը, Հակոբ Կարագյոզյանը, Մանուկ Ասատրյանը, Սեդրակ Բարսեղյանը, Սարգիս Հակոբյանը, Վարդան Ղազարյանը, Մանուկ Մանուկյանը, Պետիկ Այնաջյանը, Գյունաշ Մկրտա-

չյանը, Նպրաքսյա Բալաբանյանը, Մանիկ Վարդանյանը և շատ ուրիշներ։ Տպագրական ցեխի արտադրող բանվոր Հակոբ Շեկոյանը այժմ աշխատում է որպես նույն ցեխի վարիչ։ Բանվորներից առանձակ որակյալ մասնագետներ են պատրաստել ցեխերի վարպետներ Լ. Ազիզբեկյանը, Մ. Կարլանյանը, Գ. Յումշաջիկյանը, Ս. Գյուդինյանը, Ա. Սուքիասյանը, Խաչիկ Բդոյանը, Համբարձում Սիմոնյանը։ Տպարանը ներկայումս լրիվ ապահովված է մասնագիտացած որակյալ արտադրող բանվորներով։

Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանով մեծ չափերով ընդարձակվելու է հրատարակչական աշխատանքների ծավալը։ Յոթնամյակի վերջում Ակադեմիայի Հրատարակչությունը տպագրելու է 3500 մամուլ աշխատանք, 500 հազար օրինակ տպաքանակով (1944 թ. 150 մամուլի և 1961 թ. 2100 մամուլի դիմաց)։ Այս թվերը մեր հրատարակչական աշխատանքի հետագա զարգացման ամենապերսպեկտիվ ապացույցներն են։

Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԽԻՎՆԵՐԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռուսաստանում, մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակը, արխիվային գործի վրա քիչ ուշադրություն էր դարձվում։ Գոյություն ունեցող արխիվները ցրված էին բազմաթիվ ու բազմապիսի հիմնարկ-ձեռնարկությունների միջև և չկար մի արխիվային օրգան, որ զբաղվեր արխիվային նյութերի կենտրոնացման, միասնական պետական արխիվային ֆոնդ ստեղծելու և այն գիտականորեն մշակելու հարցերով։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակից անմիջապես հետո Սովետական կառավարությունը ազդայնացրեց և պետական հսկողության տակ վերցրեց ցարական Ռուսաստանի կենտրոնական և մյուս բոլոր արխիվները։

1918 թ. հունիսի 1-ին Վ. Ի. Լենինը ստորագրեց «Արխիվային գործի վերակառուցման և կենտրոնացման մասին» նշանավոր դեկրետը, որը դարձավ Սովետական Միության արխիվային շինարարության հիմքը։ Համաձայն այդ դեկրետի, նախկինում գոյություն ունեցող կառավարական, ինչպես նաև առանձին գերատեսչությունների և հիմնարկ-ձեռնարկությունների արխիվները հայտարարվում են վերացված, իսկ այնտեղ պահվող բոլոր գործերը և փաստաթղթերն ու նյութերը կազմում են պետական միասնական արխիվային ֆոնդ։ Այսպիսով, Սովետական Ռուսաստանի տերիտորիայում վերացվում էր հիմնարկության սեփականության իրավունքն իր արխիվի նկատմամբ, մի բան, որ հարյուրավոր տարիներ շարունակ գոյություն ուներ նախառևոլյուցիոն Ռուսաստանում։ Նոր դեկրետի համաձայն ինչպես նախառևոլյուցիոն շրջանի, այնպես էլ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայից հետո ստեղծված հիմնարկ-ձեռնարկությունների արխիվները և այնտեղ կուտակված նյութերը հայտարարվեցին պետական սեփականություն։

Արխիվային շինարարության մասին հրատարակված լենինյան դեկրետը և արխիվների կարգավորելու գործում Սովետական Ռուսաստանում ձեռք բերված փորձն օգնեց Սովետական Հայաստանում ևս ձևավորելու արխիվային շինարարության աշխատանքներին։

1924 թ. մարտի 6-ին հրատարակվում է Հայաստանի Կենտգործկոմի դեկրետը՝ Պետական Արխիվի հիմնադրման մասին, այն ամբողջությամբ հիմնված էր 1918 թ. հունիսի 1-ի «Արխիվային գործի վերակառուցման ու կենտրոնացման մասին» լենինյան հռչակավոր դեկրետի սկզբունքների վրա։ 1924 թ. հոկտեմբերի 1-ին սկսվում է Հայաստանի Պետական Կենտրոնական արխիվի գործունեությունը։

Հայաստանում Պետական Կենտրոնական արխիվի հիմնադրումից հետո անհրաժեշտ էր լուրջ ջանքեր գործադրել Պետական միասնական արխիվային ֆոնդի մեջ ընդգրկելու Հայաստանի և հայ ժողովրդի պատմությանը վերաբերող բոլոր արխիվային նյութերը։ Սա բավական ծանր և լուրջ գործ էր։ Դարեր առաջ կորցնելով իր պետականությունը, հայ ժողովուրդը ցրվել էր աշխարհով մեկ և այդ պատճառով էլ նրա տնտեսական, քաղաքական ու կուլտուրական կյանքի մի շարք կարևորագույն երևույթներ տեղի էին ունեցել Սովետական Հայաստանի այժմյան տերիտորիայից դուրս, հատկապես Ռուսաստանի քաղաքներում՝ Պետերբուրգում, Մոսկվայում, Աստրախանում, Նոր-Նախիջևանում, ինչպես նաև հարավային Ուկրաի-